



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ը. — ՇՐՋԱՆ ԺԵ.

1882

ՏԱՐԻ ԺԵ. ՕԴՈՍՏՈՍ 31.

Վ Ե Ր Ջ Ը Մ Ի Տ Ք Ա Ր Ա՛.

Ես մի հիւր եմ աշխարհիս վերայ, ես այս տեղ մնալու մարդ չեմ, երկինքն է իմ վնէլու տեղս, այնտեղ է իմ հայրենիքս: Ես այստեղ զործ պիտի կատարեմ, այստեղ՝ ճանապարհորդի նման՝ հան դէս, հան դէն պիտի գնամ, գամ, նեղութիւններ, անհանգստութիւններ քաշեմ, դադրեմ, ուժից ընկնեմ. բայց այն տեղ իմ երկնաւոր Հայրս ու Աստուածս ինձ կուրախացնի, մխիթարութիւն, հանգստութիւն, զուարթութիւն կարգիւի, յաւիտենական աշխարհի անվրդով խաղաղութեանն ու երջանկութեանն ինձ մտնակից անելով:

Ես այստեղ Թէ ուրախութիւն տեսի, Թէ ախրութիւն, Թէ բաղձաւորութիւն եւ Թէ անբաղձութիւն ու ցաւեր. ամենն՝ ասացի, եւ իմ բաժինս ու վիճակս է ամենայն հողեղէն ու մահկանացու մարդոց հետ այս անցաւոր աշխարհումս, ու անտրտունջ տարայ. պէտք է, ասացի, ամեն բան եւս հնազանդութիւնով քաշենք, ինչ որ մեզ համար տնօրինուած է մեր երկնաւոր Հօրէն, պէտք է ամեն բանի եւս դիմանանք. ով որ լու չէ չարչարուել, ով որ շատ նեղութիւններ չէ տեսիլ, նա ուրախութիւն եւս չի վայելիլ:

Փորձառութիւնը՝ կեանքի վարժապետն է. խոհականութիւնը (խոհեմութիւնը) խելօք մարդի հրապն է: Եւ ուր որ փորձառութիւնն ու խոհականութիւնը միանում են Քրիստոսի հոգու հետ՝ բարեբաղդ իմաստութիւնի ու իմաստուն բաղձաւորութիւնի պայմաններն այնտեղ են կատարուած տեսնելում:

Ընդհանրապէս պիտի զարմանայ մարդս, որ քիչ մահկանացուք են կեանքի իսկապէս անխուով ուրախութիւն վայելում, թէեւ ոչ մի բանի ետեւից այնչափ չեն ընկնում, Զանք, աշխատութիւն չխնայելով, ինչպէս որ հետեւում են իսկապէս անյորդով ուրախ կեանք ունենալու: Մարդ պիտի զարմացած, ապշած մնայ, թէ ամեն մի մահկանացուի՝ իւր աչքի առաջին դրած ամենօրուայ նպատակն այդ է, որի ետեւիցն է ընկած հոգով, մարմնով՝ առաւօտուանից մինչեւ երեկոյ բան ու գործն է արել այդ բանին հասնելու: Բայց եւ այնպէս ձեռքիցը շատ քիչ բան է գալի. այդ իւր ցանկութեանն հասնելու: Ինչիցն է, որ բանն այդպէս անյաջող է գնում ու իւր ուզեցածի հակառակն է դուրս գալիս: Կարո՞ղ ենք խելք հասցնել այս բանին, ու մի կերպ՝ պատճառը հասկանանք, թէ՛ շատ դժուար է այդ բանը մեզ հասկանալու ու մեր խելքի բանը չէ, որքան եւս գլուխ կոտրենք: Մի կարծիք թէ՛ այդ բանը հասկանալն անկարելի է ու մտքիցդ պէտք է հանես առանց զուր տեղը գլուխդ ցաւացնելու: Բանը ձախ գալը քեզ պարզեցնելու ու աջի բերելու համար, ահա ի՞նչ է քեզ հարկաւոր անել՝ ու հաւատա՞, որ սուտ չեմ խօսում, ու ասածս դուրս կգայ անպատճառ: Քեզ պէտք բանն այդ տեղ այն է, որ հաստատ կամք ունենաս, հաստատ մտքումդ դնես մի եւ նոյն ժամանակ՝ ոչ մի բանի տեղ չդնել այն ամենայն արգելքներն, որ խափանում են ու չեն թողնում քեզ քո ցանկութիւնիդ հասնելու, որ սրտի հանգստութիւն ունենաս ու անպատճառ բաղդաւոր կլինիս: Կամ՝ կարելի է կարծես, որ շատ ուսումն, մեծ գիտութիւն պէտք է ունենայ մարդս, որ կարողանայ խելք հասցնել այն միջոցներին, որ պէտք է ձեռք բերի մի տեւողական ուրախութիւն մեր սրտի մէջը հաստատ կերպով ունենալու համար: Զէ՛, այդ եւս չէ. դորա համար մեծ ուսումն ունենալ, շատ կարգացած մարդ լինելն եւս չէ հարկաւոր: Սուրբ գիրքը, կադինի կամ կորիպի մէջը հանել ու մեզ տալու նման՝ տալիս է մեզ աշխարհքիս ամեն փորձառութիւնների միջովն՝ այս կարճ խօսքերի մէջն, թէ՛ Վերջը Դուք արեա՛:

Ամեն բան, մեր արած գործերի ամենափոքր բանն անգամ, իւր հետեւանքներն ունի, որ շատ անգամ ոչ մեր աչքին է ընկնում, եւ ոչ փոխել ենք կարող, որչափ եւս ուզենանք. այդ հետեւանքները, կամ մեր արածիցը դուրս եկած բաները, կրկին

պատճառ են դառնում ու ներգործութիւն ունենում եւս ուրիշ բաներ դուրս գալու վրայ, որ մեք չէինք կարծել թէ այդպէս բան կարող է լինել: Աշխարհքիս այս օրուայ գրութիւնը, ազգերի այսօրուայ ունեցած վիճակն, որոյ մէջ գտնվում են, այս՝ այն գերդաստանի գրութիւնն՝ որ ունի, այս՝ այն մարդի՝ այս ու այնպէս լինելն՝ յառաջ է գալի՝ իբրեւ ներգործութիւն ու գործ՝ անցած տարիներին ու դարերին: Այս օրուան մէջ, ինչ որ պատահում է, լինում է, եկող օրերումն անպատճառ պիտի երեւի հետեւանքն ու մեք պարզ պէտք է հասկանանք թէ՛ այս օրուայ մեզ պատահածիցը դուրս եկաւ, ինչ որ տեսնում ենք յետուայ օրերումը: Այս օրուան կարճատեսութիւնը ու անզգուշութիւնը է, որ կարելի է, կարճ միջոցում քեզ աղքատացնում է, կամ առաջին պատճառն է շուտ մեռնելուդ, կամ մի ծանր հիւանդութեանդ: Մի բարի, մի լաւ խօսք՝ որ այսօր բերանիցդ դուրս ես հանում, մի բարի գործ՝ որ այսօր անում ես, պատճառ է լինում, որ քեզ լաւ են ընդունում այնտեղ, որ մտքիցդ չէիր անց կացնիլ այդպիսի պատիւ ստանալու, կամ մի օգնութիւն ստանալուդ այն տեղից, որ չէիր կարծիլ. կամ մի սրտանց բարեկամ քեզ օգնելու, որ քեզ ամենեւին յայտնի չէր ու ամենեւին չէիր կարծել, որ արժանացած ես նորա այդպիսի անկեղծ ու սրտացաւ բարեկամութեան:

Ամեն բան, թէ՛ աշխարհիս մէջ ստեղծուած բաների մէջն ու թէ՛ մահկանացու մարդոց ունեցած վիճակների մէջն, ամենն եւս յառաջ եղածիցն յառաջ եկած պատճառներ ու ներգործութիւններ են, մին մինի հետ շղթայի պէս կապուած պատահումներն են, որի մինը՝ միշտ միւսի պատճառն է դառնում: Այսպէս է լինում, որ ամենեւին բանի տեղ չդրած եւ ամենափոքրիկ բաներից դուրս են գալիս ամենամեծ նշանակութիւն ունեցող հանգամանքներ, որ ներգործութիւն են ունենում ու փոխվում, ուրիշ կերպ լինում բոլորովին թէ՛ մի ամբողջ, թէ՛ բոլոր մի հասարակութիւնի, մի քաղաքի ողջ ժողովուրդ: Թէ՛ մի ամբողջ ազգ, թէ՛ ամբողջ ազգեր, եւ վերջապէս՝ բոլոր աշխարհիս այս՝ այն մեծ կտորներն: Եթէ որ մարդս՝ Ամենատես Աստուծոյ նման՝ ամեն բան կարողանար իւր աչքիցը չփախցնել, ամեն բան իւր աչքի տակիցն անց կենար, այն ժամանակ կտեսնէր ու կիմանար, որ ոչ մի մեր արած բանի վրայ պէտք չէ այն աչքով մտիկ տանք

Թէ՛, ոչինչ բան է՝ այնպէս անց կկենայ, կգնայ, որ մի նշանը չերելիլ. այլ լաւ կիմանար, որ ամեն մի շատ պատիկ բանն, որ մեք անումենք, մի մի սերմեր են, որ մեք ցանումենք, եւ պէտք է ժամանակին դուրս գան ու աճեն, Թէ՛պէտ մեք այդ բանը մեր մոքից ամենեւին չենք անց կացնում:

Միայն այս մի բանը մեք հաստատ գիտենք ու առաջնականց կարող ենք ասել Թէ՛ ինչ որ մեր արածների մէջն ընդգէմ է Աստուծոյ օրէնքներին, բնութեան կամ ախարհքիս մէջ Ատեղծողի դրած կարգ ու կանոններին ու մեր խելքի ընդունած ճշմարտութիւններին, աներեւոյթ տիեզերքի հետ ունեցած ներգաշակութիւնով՝ բարերար ներգործութիւն կունենայ անխտոր ու անսխալ կերպով. եւ ընդհակառակն՝ ինչ որ ընդգէմ է մեր՝ կամ ուրիշների վրայ, շուտ Թէ՛ ուշ, մեծ Թէ՛ պատիվ՝ վատ ազդեցութիւն կունենայ՝ ու պիտի ունենայ միշտ:

Այս դո՛ւ-լս-իւն-ն ունենալու համար՝ ինչ որ անես, պէտք է միայն անես Թէ՛ Վերջն ինչ կլինի: Ոչ Թէ՛ միայն քո սրտէն արած գործիցդ, այլ մինչեւ անգամ քո սրտիդ խոր տեղերումն ծածկած, Թաղցրած ցանկութիւններիցդ եւս պէտք է իմանաս ապագայում յառաջ եկած վատութիւնն կամ լաւութիւնն:

Ամեն մի մահկանացու մարդ ունի իւր սրտումն իրան միայն յայտնի ցանկութիւններ. կան մարդիկ, որ Աստուած են ազաշում ջերմեռանդն սրտով, որ իւրեանց ազօթքն լսի ու կատարի, կասես Թէ՛ իրանց բոլոր բաղդաւորութիւնը միայն գործնումն է: Եւ երբ որ տեսնումեն, որ Աստուած նոցա տաք սրտով արած ազօթքն չէ լսում, կամ երբ որ իրանց արած խնդիրքի հակառակն է պատահում, իրանց սրտին մեծ տխրութիւն է բերում, ինչու որ այդ կերպ նոցա ցանկութիւնն, որոյ համար Աստուած էին ազադակել, այն ժամանակն ինչպէս նոցա սիրտը կտարժում է, ինչպէս ձեռքները Թուլանումէ ու իրանք՝ բոլորովին մոլորւումն, մոլում: Ինչպէս Աստուծոյ երեսից ընկած են համարում իրանց, ու իրանց մոքումն ասումեն Թէ՛ Աստուած մեզ աչքիցը ձգել է, մեզանից ձեռք է վեր առել. կամ Թէ՛ տեսնելով, որ իւրեանց ազաւանքը չկատարուեց, տարակուսած մնումն ու մոռնում Թէ՛ նախախնամութիւն արդեօք կայ. բայց նորանց խնդրածքի չկատարուիլ՝ անկասկած՝ Աստուծոյ մի յաջողութիւն էր Թէ՛ նորանց եւ Թէ՛ ուրիշների բարօրութեանն

Համար: Մի լաւ մտածիր յառաջ, երբ որ Աստուծոյ ազօթք ես անում այս՝ այն ցանկութիւնդ կատարելու համար, թէ՛ ինչ դուրս կգայ քո խնդիրքդ կատարուելոյը, եթէ Աստուած կամեցել է, որ քո ցանկութիւնդ քո խնդիրքդ կատարուի: Կարելի է, որ դու Աստուածանից մի մեծ կարողութիւն ես խնդրում քեզ համար, որ անհոգս ապրես. բայց ինքդ քեզ լաւ չես ճանաչում: Կարելի է որ՝ այն ժամանակն դու քեզ նման մարդոյ բարւոյն համար ամենեւին չէիր մտածել, ու չէիր աշխատիլ, ունեցած ոյժդ, կուզէիր, որ քիչ բանեցնես. հարստութեանդ մէջ առաքինութիւնիցդ կթուլանայիր. քո զգացմունքիդ ունայնասիրութիւնը քեզ ճամփիցդ կհանէր, կմոռոքեցնէր: Գոհ կեանք ունենալու, գոհ սրտով ապրելու համար՝ դիզած հարստութիւն չէ հարկաւոր, այլ բարեպաշտութիւն ու սակաւապետութիւն (քիչով բաւականանալ): Կարելի է, որ շատ եւս չես ապրելու: Գոբոյր ունեցած չունեցածդ, քո բոլոր հարստութիւնդ ուրիշներին ժառանգութիւն կմնայ, կարելի է որ՝ իսկ քո զաւակներիդ, որոնց Աստուծոյ իմաստուն տեսչութիւնը՝ իրանց ունեցած շրտորհքներին համեմատ, իրանց՝ ինչ մտքի տէր լինելուն համեմատ՝ մի բոլորովին ուրիշ վիճակի մէջ լինել է որոշել, եւ անշուշտ աւելի լաւ վիճակ, քան թէ դու քո սահմանափակ խելքովդ միտք անել ու գտնել կարող էիր նորանց համար:

Արքան եւս անմեղ, որքան եւս պստիկ ցանկութիւններ ունենաս, ու որքան արդար ու իրաւացի եւս երեւին քեզ քո ունեցած ցանկութիւններդ, մտածիր թէ՛ նորանցից ինչ դուրս կարող է գալ, թէ որ կատարուին: Մի օրը՝ միւսին նման չէ: Ենչ որ քեզ այսօր շատ լաւ բան է երեւում ու մեծագոյն բարիք, կարելի է այգուց դու մտքիցդ դէն ձգես իրրեւ վատ բան. եւ ինչ որ մի ժամանակ քեզ մեծ անյաջողութիւն կամ ձախորդութիւն էր երեւում ու գանգատումէիր՝ գլխիդ վայ տալով, յետոյ փառք տալով կընդունես իրրեւ Աստուծոյ ողորմութիւն ու շնորհք: Դու առաջուանից չես կարող իմանալ թէ՛ ինչ կ'ինի, քո խելքդ կարճ է, հեռու չէ հասնում: Բայց Աստուած, որ աշխարհքիս կառավարողն է, իրան ամեն բան լաւ յայտնի է: Կարելի է, որ դու աղաչանք, սղաղատանք էիր անում, արտասուք թափելով, շրթունքդ դողաղնելով, որ քո մօրդ, հօրդ, քո հոգով սիրած բարեկամիդ կեանքին ինայի ու ողորմի — բայց

կարելի է, որ շատ ժամանակ չի անց կենալ, որ դու Աստուծոյ շնորհակալ կլինիս, որ ցոյց չտուեց նորանց այս՝ այն սարսափելի պատահմունքը՝ ու ժամանակով իւր մօտն առաւ, տարաւ:

Սբա համար ասում ենք, որ մինչև անգամ մի ցանկութիւն, որ ունէցար, ինչո՞ւ միտք արեալ է՝ խորանից ինչ կարող է դուրս գալ, ու դու աւելի չափաւոր կլինիս այն բանի մէջն, ինչ որ սրտանց ուղղումնս կատարուի. աւելի գոհ կլինիս այն փիճակովդ, որ քո երկնաւոր Հայրդ քեզ արժան է տեսել. քո մարդկային թուրութիւններդ ճանաչելով ու բոլորովին հաւատալով ու յանձնուելով քո Ստեղծողիդ, կաւելացնես քո խնդիրքիդ վրայ աղօթքումդ թէ՛ «Հայր, իմ կամքս չլինի, այլ քոնդ»: Եւ յիշաւ, որ որ իրան այն տեղն է հասցրել, որ չափաւոր լինի իւր ցանկութիւնների մէջն՝ ու ամենայն բան Աստուծոյ յանձնի, որ իւր իմաստուն կառավարութիւնովն ամեն բան ի բարին է առաջնորդում, այնպիսի մարդն ազնիւ հնազանդութիւնով միաբանելով Աստուծոյ կամքի հետն ու այնով բաւականանալով, ինչի որ միանգամ իւր երկնաւոր Հայրն արժան է տեսել իրան, — այդպիսի մարդն, ասում ենք, ճշմարիտ բազդաւորութեան դրան մօտն է կանգնած. այդպիսի մարդն՝ Յիսուսի հոգովն է ապրում:

Վերջը հարաքէք: Եթէ որ այդ անես, քո անզգուշութիւնովդ ընկնել քեզ դժուար կպատահի. բայց կարող է պատահել որ դու ապագայի համար մտքումդ դրած այս՝ այն փոխես, որ սաստիկ ցանկութիւններիցդ տարուած՝ անուամս: Այ մի ժամանակ այնչափ աւելի ուշադրութիւն չսլիտի դարձնենք մեր մտքումը դրած բանի ունենալու հետեւանքների վրայ, քան թէ այն ժամանակն, որ արդէն ուղղւում ենք մեր մտքինը կատարենք: Երբ որ բանը բանից անց կացաւ, խօսքը բերանից դուրս եկաւ՝ պրծաւ, գործն իւր ճանապարհն ընկաւ, այն ժամանակ մեր միտք բերելն թէ՛ այս՝ այն բանն մեր բռնած գործի տակից դուրս կգայ, այն նշանակութիւնը միայն կունենայ, որ մեր ունեցած վախը կաւելացնի: Թեթեւամիտ մարդը մի բան անումէ առաջուանից չմտածած, չկշռած, ամեն կիրք եւս իւր հետն իւր թեթեւամտութիւնն ունի: Զգուշաւորութիւնն, խոհականութիւնն՝ ընդհակառակն՝ մինչեւ որ ամեն կողմից լաւ չմտածի ու չկշռի իւր այն բանըն, ինչ որ ուղղւում է անի, գործի ձեռքը չտալ: Նա առ անգամ մեզ այնպէս է երեւում թէ՛ մեր մի բան այս կամ այն կերպով

անելումը, մի վատ բան չկայ ու դորա տակից մի վտանգ եւս չէ կարող դուրս գալ, ինչու որ մեր մտքումը վատ բան չըկայ, ու մեր նպատակը չէ ամենեւին: Քիչ է պատահում, որ մահկանացու մարդս՝ ուղենալով ու դիտմամբ վատ նպատակ ունենայ մի բան արած ժամանակն. միայն շատ բիրտ ու դաժան չարագործը առաջուանից լաւ կմտածի, կսարքի իւր մտքի չարութիւններն թէ՛ ինչ կերպով, ինչ ճանապարհներով յառաջ տանի ու յաճողեցնի առանց սխալուելու, այն չարութիւններն, որոց ներգործութիւնն՝ ուրիշներին սուգ նստեցնել, բան փչացնել, մարդ փչացնել է: Բայց եւ ուղիղ սիրտ ու միտք ունեցող քրիստոնեայքն եւս կարող են սխալ անել այն տեղ, երբ որ միջոցներ են ընտրում՝ եւ այդ միջոցներովն իրանց՝ շատ անգամ բարի դիտաւորութիւններն յառաջ են տանում: Մի քանիսը, սաստիկ ցանկութիւնից վառուած, որ իրանց մտքում դրած են շուտ ու անպատճառ հասնեն, ոչ թէ չեն զգուշանում, այլեւ իրանց միամտացնում են այնով, որովհետեւ իրանց նպատակը բարի էր, այդ պատճառով եւս այս՝ այն ծուռ ճանապարհը բռնելը վնասակար չհամարեցին: Մի պատիկ սուտ ասելը, մի անվայել հնարք ու խորամանկութիւն բանեցնելը, իրանից փոքր մարդոց հետ արհամարհանքով, սառն ու խիստ կերպով վարուելը, այս ամենը նոցա աչքին բան չեն երեւում, երբ որ իրանց ջանքը, միտքը, մեծ օգուտներ ձեռք բերելու համար է: Բայց ո՞վ է իմանում, որ իսկ այդ ժայռին է կպչում ամեն բանն, ու փշուր փշուր լինում: Քամի ցանոզը՝ մրրիկ կհհիծի:

Արդէն ժողովուրդի բերանն եղած առաջն ասումէ թէ՛ ահա լաւ մի նպատակէ հասնելու համար եւս ասիւթի միջոց բանեցնել, ընդունել չէ: Բո ցանկութիւնովդ միայն, քանի որ քո ցանկութիւնդ ու նպատակդ (մտքումդ դրածը) քո սրտումդ է ծածկուած՝ ոչ բարի, ոչ չար բան կանես: Բայց ինչ միջոցներով որ դու քո ցանկութիւնդ, քո մտքիդ դրածը կատարումես, այդ միջոցներն են գործը, եւ այդ գործիցն են դուրս գալի վատ կամ լաւ հետեւանքներ, քո կամ ուրիշների համար: Թէ քո մտքումդ դրածը՝ կատարուելու բան է՝ կամ չէ, այդ՝ ամենագէտ Աստուծոյն է յայտնի. բայց թէ այդ մտքիդ մէջն ամենեւին վատ բան չկայ, որ Աստուծոյ, կամ մարդոց առաջին մեղք անում լինես, այդ քեզ բաւ յայտնի է, վերջը մտածիր, քննիր ու տես թէ՛

իրաւացի միջոցներ ես ուզում բանեցնել քո նպատակիդ հասնելու համար: Կարելի է, որ իսկ քո ընտրած միջոցներդ են ամենամեծ արգելքները, որ քո նպատակիդ չես կարում հասնել: Կարելի է, որ իսկ քո ընտրած ճանապարհներդ են, որ քեզ ամենից աւելի հեռացնում են քո նպատակիցդ, որին որ պէտք է քեզ հասցնէին: Եղան մարդիկ, որ իսկ այնուի անբաղդ եղան, ինչու որ յոյս ունէին բաղդաւոր լինելու: Եղան մարդիկ, որ իրանց քաղաքացիների առաջ պատուից ընկան, անոճները կոտրուեցան իսկ այնուի, ինչուի կարծումէին թէ՛ նորանց աչքումը կբարձրանա՞ն: Մարգս իւր մտքումն շատ բան կարող է գնել բայց Աստուած պիտի յաջողի, առանց Աստուծոյ բան չլինի: Խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ:

Վերջը՝ մտածիր: Ոչ մի բան մի՛ անիլ, երբ որ կիրքդ շարժած է, երբ խաղաղ հոգով, հանգիստ սրտով չես: Հաւատ մի՛ ընծայիր անազնիւ ցանկութիւններիդ ու նոցա մի՛ լսիր, երբ որ վատ բանն քեզ քաղցր երեւցնելով դրդում են քեզ անլայել բան անելու, որ մարդոց առաջին ամաչես յետոյ: Անազնիւ ցանկութիւնների ներգործութիւնն եւս անպատճառ այն կլինի, որ դու մի՛ օր պէտք է ամօթ քաշես: Մի՛ թէ քո առաջուց արած անխելքութիւններիցդ, ինչ որ ստացար, ինչ ամօթ ու վնաս՝ որ քաշեցիր դեռ խելքդ գուխդ չեկան, ուրեմն ինչի՞ համար ես դու նախատում երեխային, որ արդէն մի անգամ անդգուշութիւնիցն կրակի մօտենալովն, ձեռքն ու հագուստն այրեց ու շատ լաց էլաւ, ու չքուղանալով ստացած վնասիցն ու մոռանալով միանգամ իրան գլխին եկածն իւր երեխայութիւնիցն, դարձեալ կրակին է մօտենում: Ինքնդ եւս երեխայի նման չես արգեօք, ինչի՞ ես փափագում սրտի հանգստութիւն ունենալու եւ տեւողական ու ամէն պատահմունքից բարձր խաղաղութիւն, բարօրութիւն վայելելու, երբ որ դու ինքնդ ոտով խփում ու՛ քեզանից հեռացնում ես խաղաղութիւնն ու բարօրութիւնը:

Վերջը մտք արա դու, որ քո տանդ խաղաղութիւնն ու հանգստութիւնը վրդուլում ես, տալիս ու վրայ անում: Ինչ է որ սիգտդ այդպէս է ուզում, քո ասածդ ես ուզում անես, հակառակութիւն ես ուզում սարքես: Վերջը մտածիր, ասում եմ քեզ, եթէ ոչ անբաղդութեան մէջ կմեռնես ու տունդ եւս բոլորովին ձեռքից կգնայ ու կքանդուի: Ինչու ես դու քո ունեցած իշխա-

նութիւնդ ու կամքդ բանեցնելու համար, քո ասածդ անել տալուդ համար, պահանջում, որ քեզ ոչ մի բան չասեն, ներողամիտ լինին, երբ դու ուրիշների արած պակասութիւնի ներողամիտ լինել ամենեւին չես ուզում: Ինչի՞ համար դու, ամենեւին օր չտալով քո ընտանեացդ բռնական ես դառնում, ու բոլորի սիրտը քեզանից սառեցնում, կտրում, որ վերջը վերջը ծերութեանդ ժամանակը մենակ մնաս ու գիւղի վայ տաս:

Վերջը մտածիր, խելքդ տանել տուած խաղացող, որ նարդի բռնէի, խաղալու թղթերի ու յօդի մէջ յառաջ մի ախորժ բան էիր գտնում, իսկ յետոյ սաստիկ սէր կապեցիր ու խելքդ գնումէ այդ բաների համար, լաւ խմացիր, որ դու եւս ամէն խաղացողների հացին կը հասնես, որոնք որ իրանց առողջութիւնը բոլորովին կորցրեցին, մարմնով հայուեցան մաշուեցան, մտքով եւս թուլացան, ու այնքան իրանք իրանց կորցրին, խելքները խաղի տալով, որ իրանց բոլոր ունեցածն ու չունեցածը մինչեւ վերջին փողը տեսան, որ խաղի տուին, ձեռքներէիցը գնալ, ու իրանց մնաց միայն դրնից դուռն մանգալ ու ողորմութիւն հաւաքելը, կամ՝ իրանց ունեցած պատուիցն ընկան, երեսներին այլ եւս մոտիկ տուող բարեւ տուող չկար, ու այսպիսի յուսահատութեան մէջ իրանց մնացած սեւ օրերն ախ ու վախով անց կացրին: Լաւ մարդիկը՝ տես, քեզ մարդ ճանաչել, մարդու տեղ դնել չեն ուզում, ընտանիքդ սաստիկ ցաւումեն քո արարմունքիդ վրայ, խելքդ գլուխդ հաւաքիր ու հասկացիր, որ այն անպատուութիւնն, որ տեսնումես պատուաւոր մարդիկների կողմից, ու այն ցաւն, որ տեսնումես քո մասին քո ընտանիքիդ կողմից, քո պահպան, քեզ պաշտպան հրեշտակիդ, քեզ ղգուշացնող ձայնն է՝ լսիր այդ ձայնին:

Վերջը մտածիր, դու մեծ մեծ խօսող ու պարծանք սիրող, ոյժդ, խելքդ չհասած մեծ մեծ բաների ետեւից ընկնող, ինչ որ ձեռիցդ գալու չէ, բայց սնապարծութիւնդ քեզ չէ թողնում որ քո չափդ ճանաչես ու չմոռանաս. սիրտդ ուզումէ, որ քո քաղաքացիներիդ մէջն երեւելի լինի, քեզ մատով ցոյց տան՝ այդ անխելք ցանկութիւնիդ հասնելու համար, յիմարաբար այնպիսի բան ես բռնում, որ շատերի բերանից լսես քո ականջովդ թէ՛ շատ ողորմելի մարդ է, պարծանքի համար հոգի էր տալիս, ահա տես ինքն իրան ինչ տեղը բերեց, հասցրեց իւր անխելք ու ուժից

բարձր բաների կաշելուլը, ի՞նչ է ձեռք ընկնելու, ի՞նչ պիտի շահուիս, որ ունեցած ուժիցդ, ունեցած կարողութիւնիցդ դուրս բան ես բռնում, ի՞նչ է, աւելի երեւելի, անուանի մարդ ճանաչեն քեզ, քան թէ ինչ որ ես ինքնդ: Այքդ լաւ բաց արա, ու մի լաւ տես, կարելի է արդէն այժմ՝ եւս քո տանդ, քո ընտանիքիդ դրութիւնը շատ վատ տեղն է հասել, թէեւ դեռ ուրիշներին յայտնի չէ, կարելի է որ, արդէն այժմ՝ եւս այնչափ կարճատես ես, որ չես կարում հասկանալ թէ՛ գործերի վերջը լաւ չես բերիլ, պարտքերդ տալ չես կարողանալ, որ դարձեալ իրրեւ ի՛ր պատիւն ու անունն պահող մարդ աշխարհում ապրել կարողանաս: Ինչի՞ ես առաջուայ նման, փող չխնայելով ապրում, մեծ մեծ ծախքեր անում, ինչպէս որ միշտեւ ցայժմ՝ արել ու ապրել ես, ինչի՞ բան չես պահասացնում, ինչի՞ ծախքդ՝ չես չափաւորում ու քիչացնում, երբ որ ժամանակն է առաջուան ապրուստիցդ ձեռք քաշելու, քո հաւիւդ, այժմեան դրութիւնդ լաւ հասկանալու ու վերմակիդ չափովն ոտերդ երկարացնելու, որ բաց չմնան: Ինչի՞ ես մեծացնում ցաւդ, որոյ մէջն արդէն ընկել ես, ունեցածդ՝ քանի գնումէ, պահասումէ, ու չէ աւելանում, օրէց օր կարողութիւնիցդ ընկնումես ու քանի գնումես աղքատանում: Ի՞նչ բանի համար ես պարտքերդ շատացնում, վատ դրութիւնդ աւելի վատացնում, սորանից նորանից փող առնում, քեզ՝ մի նեղութիւնիցդ ազատում ու միւսի՝ աւելի մեծ նեղութիւնի մէջ ձգում, խելքդ գրպանդ դրած: Աստուծոյ քեզ տուած խելքը, մարդիս բանականութիւնը, խոհականութիւնը մի օրուայ համար ես պահել, որ չես բանեցնում, ու քանի գնումես, քեզ աւելի նեղ տեղը ձգում, որ դուրս գալու ազատուելու ճար ու ճանապարհ չգտնես: Ինքնդ քեզ կորցրել ես, ու առանց քեզ յետ քաշելու, առանց առաջդ ու քամակդ մոխիկ տալու, վաղա՛վաղ գնումես այն ճանապարհն, որ քո տունդ պէտք է քանդի, քո անունդ կոտորի, փչացնի:

Վերջը մտածիր, անհաւատարիմ պաշտօնեայ, որ ոչ թէ օրէնքով ու խղճմտանքով ես գործ տեսնում, այլ ինչպէս որ սիրտդ է ուղղում, ինչպէս որ մտքովդ ես դրել, ինչպէս որ քո շահդ է քեզ թելադրում, ի՞նչ աչքով որ մի կամ միւս մարդի վրայ մոխիկ ես տալու: ո՞վ որ քեզ դիւր եկել, ո՞վ որ քեզ սիրելու ճանապարհը գտել է, ում որ տարուել ես, նորա համար չէ՛ չկայ, ուզե-

ցածները կանես. քեզ համար իրաւացի գործն այն է միայն, որ տեղից որ մի ակնկալութիւն, մի շահ կարող ես ունենալ քո շահիդ համար՝ պատրաստ ես խղճմտանքդ դէն դրած՝ ժողովուրդի տուածը տակով անել, տուած երգումնդ ստել, ուրանալ: Արեւի է, որ այսօր եւս արդէն շատերին յայտնի է, թէ ինչպէս դու քո վիզդ առած պաշտօնիդ մէջն անհաւատարիմ ես ու քո գործքովդ ինքնդ ես մատնել քո պաշտօնիդ մէջն արած անհաւատարմութիւններիդ կողմանէ. կարելի է որ, այսօր եւս արդէն ազնուամիտ մարդիկը քեզ համար խորհուրդ են անում ծածուկ՝ քո տեղիցն քեզ վայր ձգելու: Յետ քաշուիր: Ձեռք քաշիր քո արարմունքիցդ: Միշտ փորձուած է, թէ ինչ է լինում այդ տեսակ մարդոց վերջը. շգուշացիր այն տեսներով, ինչ որ մեծ մեծ փորձերը քեզ ցոյց են տալի. զգուշութիւն լինին քեզ համար այս անկենդան, սառը տողերն եւս որ կարդումես, ինքնդ քեզ նորից ազնուացուր նոր արդարութիւնովդ ու առաքինութիւնովդ, ինչ որ մշտեւ ցայժմ արել ես, տասնապատիկ կծանրանայ քո վրայ, ու վրադ բերած անէծքի ծանրութիւնն, որ քեզ իւր տակը կխեղդի, տասն անգամ աւելի կլինի:

Վերջը մտածիր, անառակ մարմնասէր, որ անմեղի մեղքն ես մտնում, ու գլխիցը հանելով, անմեղութիւնից զրկումես, որ խելքդ, միտքդ վատ բաներ անելու ես տղել ու սրտումդ ինչ անամօթութիւններ անելու հնարներն մտածում, ամօթ, պատկառանք մոռացած: Լաւ իմացիր, որ թէեւ ամօթալի գործ անելը մի դժուար բան է, բայց չկարծես, որ արածդ քեզ կմնայ, չբացուի, չյայտնուի, ամեն գործ՝ իւր ներգործութիւնն ունի անպատճառ. գործ չկայ, որ անհետեւանք մնայ: Խելքդ գլուխդ հաւաքիր: Դու այնպիսի ճանապարհ ես բռնել. որ քո սրտիդ հանգստութիւնը, ունեցած պատիւդ ու կեանքիդ ուրախութիւնը պիտի կորցնես: Քո անառակութիւնների վրայ արած մըտքերիցդ ու երեւակայութիւններիցդ այն դուրս կգայ յետոյ, որ դու արիւն արտասուք կթաշես փոշիմանութիւնիցդ, կամ յուսահատութիւնիցդ՝ արտասուք չի գալ չորացած աչքիցդ, ու գժուածի պէս դէս ու դէն մտիկ կտաս, ինքնդ եւս չիմանալով թէ՛ ինչ ես անում, կամ ինչ անես, որ ազատուիս քո սրտիդ անտանելի նեղութիւնից: Երբ որ չար մտքիցդ վատ ցանկութիւններդ այնքան գորացել են, որ սիրտդ կրակ է բնկել ու չի:

կարում գիմանալ, այն ժամանակը միտքդ բեր, որ մի ամենա-
տես Աչք քո վրայ բաց է ու մոռնի է տալի, այնպիսի մի Աչք որ
ամենածածուկ տեղերը տեսնում է, գիշերո ան խոր խաւարի
մէջն եւս նորանից բան չէ ծածկում եւ ամենայն բան լուսի
կերբի ու յայտնի կանէ, ծածկուած չմնալ: Մի քանի րոպէ եղող
անբարոյական ցանկասիրութիւնից յառաժայած սարսափելի
նեղութիւններն ու տանջանքները շատ մարդի կեանքը սեւա-
ցրեցին, մտքի ու սրտի հանգստութիւնից եւ ուրախութիւնից
այնպէս զրկեցին, որ էլ որ չէին տեսնում ու կեանքն իրանց հա-
մար տանջանք էր դարձել: Ննչ որ միանգամ մի մարդ արեց, որ-
քան եւս որ զզջայ ու արտասուք թափի, միտք անելով ու
ինքն իրան ուտելով, թէ ինչի՞ այդ բանն արեց, բայց եւ այն-
պէս ոչինչ չօգնիլ ու իւր արածն արած կմնայ, ուղղելու ճար
չկայ: Եթէ որ ուղումես մեղքից ու արած մեղքիդ, չարաչար,
բայց անօգուտ փոշիմանութիւնից ազատ լինիս, փորձանքը
ինքնդ չբերես քո գիտիդ, քեզ պահել չկարողանալով ու քո
կապդ ինքնդ թոյլ թողնելով, այն րոպէումն՝ որ քիչ է մնացել
որ փորձութիւնի մէջ ընկնես, իբրեւ Քրիստոսի աշակերտ սիրտդ
պնդացուր, ու մտքումդ հաստատ դրած, աստ սուրբ Գրքի այս
խօսքը թէ՛ «ինչպէս կարող եմ ես այս տեսակ մի մեծ չարիք
(այսպիսի մի շատ վատ բան) անել ու Աստուծոյ առաջին մե-
ղանշել»:

Ահէն մի բան անելուդ ժամանակն մտածիլ, բայց ոչ թէ այնպէս
կարճ միտք արա թէ՛ այս գործն որ անումեմ, մի օրից յետոյ,
մի տարի անցկենալուց յետոյ, իմ այժմ՝ արած բանիցս ինչ
դուրս կուգայ, չէ՛, այդպէս կարճ մի մտածիր, աւելի հեռու
գնա ու միտք արա եւ ինքնդ քեզ ասա թէ՛ այս արածիցս ի՞նչ բ-
լտե՛ կենալիս ինչ վնաս դուրս կգայ: Մարդիս կեանքը շուտ անց է
կենում, գնում, ու մահը գալիս, մոտենում է մեր գուռը կրտ-
րում: Շատ խելօք մարդ եղիր, շատ զօրաւոր, շատերի վրայ
հրաման բանեցնող գլխաւոր իշխան ու ամենից մեծն, ամենի
ոյժը քո ձեռք թող լինի, ամենի հոգին եւս քո ձեռքումդ թող
լինի, ասենք եւս թէ՛ քո ունեցած խելքովդ ու աշխարհումս շատ
բան տեսած, փորձած մարդ լինելովդ՝ ամէն բանն այնպէս բե-
րած, իւր տեղը ձգած լինիս որ, քո բոլոր կեանքիդ համար ա-
մէն հարկաւոր բանն շատ լու յաջողեցրած, պատրաստած լի-

նիս, որ քեզ ոչ մի բան չպահասի ամէն բան քո ձեռքդ լինի, սրտիդ ամէն ուղածը կատարուի ու քեզ մնացած լինի միայն ամէն ուրախութիւն, ամէն վայելչութիւն քաւել, — բայց եւ այնպէս՝ մի բան կայ, որ քո սրտիդ ուղածին պէս անել չես կարող, որ քո ունեցած շատ խելքդ փոխես, այդ բանն, անփոփոխելի է մնում ու մարդիս մէջ խելքին եւ ունեցած իշխանութիւնին ու զօրութիւնին յաղթում՝ այդ բանն ճակ է: Քանի որ աշխարհքս կայ, այն օրուանից որ՝ ամէն բան ու մարդիկս ստեղծուել ենք ու ապրումներ, ոչ մի արուեստ, ոչ մի ուսումն ու գիտութիւն դեռ եւս հնարը ճարը չէ գտել՝ ու գտնելու եւս չէ, մահից ազատուելու, ու՝ քանի որ չափ կայ, Աստուած կայ, ապրելու: Այլ ուղումես, եղբի, ինչպէս ուղումես ապրիր, որքան ուղումես ապրիր, վերջը վերջը պիտի մեռնես, մահից չես փախելի՝ թէ՛ աշխարհքիս ամենազօրաւոր թագաւորը լինիս, թէ՛ ամենափերթին՝ օր դատող, օր ուտող՝ մշակն: Երեխան՝ ծնեց՝ թէ չէ, նորա օրորոյի վրան մահուան դատաւիճիւն արդէն եղած, դուքս եկած պրծած է, շուտ՝ թէ ուշ, եւ մահինն է, մահը՝ նորանը: Արդեօք որքան պէտք է կեանք ունենանք, քանի տարի է Աստուած մեզ կեանք տուել ու կամեցել, որ այս աշխարհքիս վրայ ապրենք. կարճ ժամանակ է տուել մեզ, թէ՛ երկար. մի տարի ենք ապրելու, թէ՛ եօթանասուներեք, ուստի տարի կեանք կուենանք, այդ մեզ յայտնի չէ, այդ՝ Աստուծոյ Գիրքի մէջն է գրուած, այն Գիրքումն, որոյ մէջը գրուած են մարդիս ունենալու վիճակն ու գլխին ինչ որ պէտք է գայ իւր կեանքումն. այդ Գիրքը մեր ձեռքումը չէ, մեր ձեռքը չընկնի, որ բաց անէինք, կարդայինք ու իմանայինք, ու ի՞նչ է մահն, բոլորովին փչանալ, ոչնչանալ, մեր գիտակցութեան բոլորովին հանգչելն, ինչպէս որ մի ճրագ չէ իմանում, որ չվառուած՝ մի ամբողջ ճրագ էր. բայց երբ որ վառուեց, գլխիցը մինչեւ վերջը վառուեց պրծաւ, հանգաւ, այն է որ հանգաւ վերջացաւ. Այնուհետեւ ամենայն բան պրծաւ, վերջացաւ, Աստուծոյ արդարութիւնն եւս հետն վերջացաւ արդեօք, եթէ հարցնես, կասեմ թէ՛ մարդիս խղճմտանքն ու Աստուծոյ յայտնութիւնը, սուրբ Գիրքը, բոլորովին ուրիշ բան են մեր առաջը հանում, ցոյց տալիս, բոլորովին ջոկ բան են մեզ սորվեցնում: Ասումն նոքա թէ մարդս՝ որ մեռաւ ու գերեզման մտաւ, դեռ ամէն բան չվերջացաւ. գերեզմանից գէնն եւս դեռ

բան կայ, այն բանն, որ կարճատես՝ հողեղէն մարդը, եթէ Գրիս-տոսի տուած ուսումի դորութիւնովն չհասկանար, ինչպէս պէտք է խմանար, թէ մահն՝ անմահական կեանքի գուռն է միայն, ոչ թէ բոլորովին փչանալ, ոչնչանալ, աշխարհիս երեսից ջնջուել, իբրեւ թէ կար, թէ չկար, այս՝ այն մարդն՝ աշխարհիս վրան ապրել են, այս աշխարհքս ամենեւին ոչ եկել են, ոչ տեսել: Այս խմանալով, վերջը միտք արա:

« Ես աշխարհքիս վրայ մի հիւր եմ »: Իմ կեանքս ուխտաւորի ուխտ գնալու ճանապարհորդութեանն է նման. ես՝ ինձ անծանօթ օտար երկիրներէն եմ անց կենում, չտեսած երկիրներս տեսնում. այդ տեղերքը ես բան չունիմ, որ իմն է ասեմ. աշխարհիս այս ամէն բարիքն իմն չեն, ինձ պահ է միայն տուած, որ պահեմ մինչեւ ժամանակը գալը, որ տամ, թողնեմ՝ ու իմ ճանապարհս գնամ. այն բարիքն հետս տանելու չեմ. գերեզմանիս մօտեցայ, այնտեղ կթողնեմ: Մի բան է, որ ինձ կմնայ, որ իմն է բոլորովին ու հետս տանել կարող եմ միւս կեանքն, յաւիտենական աշխարհն. այդ իմ հաւատ է, իմ սէրս ու իմ յոյսս, այս խմանալով, ժամանակին հոգս արա՛, որ՝ երբ որ ժամանակը լրանայ եւ օրը գալու լինի, դժուարութիւն չքաշես յանձնելու, ինչ որ քեզ պահ է տուած: Ի՛նչ բանի, որ կպչելու լինիս, ինչ որ անելու լինիս, վերջը միտք արա:

(Թարգ.)

Գ. Ե. Ա.

Դ Ի Տ Ն Ա Կ Ա Ն.

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԽԱՆՕԹՈՒԹԻՒՆ.Բ.

(Երբեք. Արդ. Բ. Է.)

Գ.

ՅՕՐԻՆՈՒՄՆ ՄՈՂՈՐԱԿԱՅԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ.

Մեր այս մոլորակային դրութիւնը կազմող երկնային մարմնոց ամենուն վրայ ալ առհասարակ գտնուած միօրինակ բնական հանգամանքներէն եւ յառաջատական աստիճանաւ մը տես-